

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն /նախկինում <<ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍՏ>> ՈՒՎԿ ՓԲԸ/ վերանվանվել է 03/02/2012թ.-ին:

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն համաձայն իր քաղաքականության տրամադրում է առևտրային, գյուղատնտեսական և սպառողական վարկեր: Վարկի մարումը և տոկոսների վճարումը կատարվում է համաձայն պայմանագրի ժամանակացույցի: Առևտրային, գյուղատնտեսական և Ֆիզիկական անձանց տրամադրվող սպառողական վարկերը տրամադրվում են համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի և Ընկերության համապատասխան իրավական ակտերի: Վերոնշյալ վարկերի վարկավորման պայմանները ներկայացվում են ստորև՝

Սպառողական վարկերի տրամադրման պայմաններ՝

	<u>Առանց գրավի ապահովվածության սպառողական վարկեր</u>	<u>Գրավի ապահովվածությամբ սպառողական վարկեր</u>
Արժույթը	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
Վարկի գումարը	50,000 ՀՀ դրամ-2,000,000 ՀՀ դրամ	50,000 ՀՀ դրամ-10,000,000 ՀՀ դրամ
Վարկի տևողությունը	3-18 ամիս	1-36 ամիս
Վարկի տարեկան տոկոսադրույքը	24%	24%
Վարկի տրամադրման վճար (միանվագ)	3%	3%
Վարկի սպասարկման ամենամսյա վճար	1%	0%
Ապահովվածությունը	ա/1-3 անձանց երաշխավորություն և /կամ այլ գրավ ք/ՈՒՎԿ հետ համագործակցող այն կազմակերպությունների աշխատակիցներին, որոնց հետ առկա է պայմանագիր, իրենց աշխատակիցներին վարկեր տրամադրելու վերաբերյալ: գ/ ա և ք կետերի չկատարման պարագայում ցանկացած այլ հաճախորդի, իր գործատուի գրավոր երաշխավորությամբ:	շարժական և անշարժ գույք

Առևտրային վարկերի և Գյուղատնտեսական վարկերի տրամադրման պայմաններ՝







	<u>ՀՀ դրամով բիզնես վարկեր</u>	<u>ԱՄՆ Դոլարով կամ ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով բիզնես վարկեր</u>	<u>Գյուղատնտեսական վարկեր</u>
Վարկի գումարը	200,000 ՀՀ դրամ-15,000,000 ՀՀ դրամ	500 ԱՄՆ դոլար կամ համարժեք ՀՀ դրամ- 40,000 ԱՄՆ դոլար կամ համարժեք ՀՀ դրամ,	100,000-4,000,000 ՀՀ դրամ
Վարկի տրամադրման վճար	2.5%-3%	1.5%-3%	3%-4%
Տարեկան տոկոսադրույք	20%-24%	18%-22%	22%-24%
Սպասարկման ամենամսյա վճար	0%-1%	0%-1%	0%
Վարկի ժամկետը	3-24 ամիս	3-42 ամիս	3-24 ամիս
Արտոնյալ ժամկետ	0-4 ամիս	0-9 ամիս	0-6 ամիս

Առևտրային և գյուղատնտեսական վարկերի ապահովման ձևերը՝ երաշխավորություն կամ գրավ կախված գումարի մեծությունից՝ համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի և Ընկերության համապատասխան իրավական ակտերի:

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն իր կանոնադրության համաձայն հրապարակային օֆերտայի միջոցով չի ներգրավում փոխառություններ, սակայն կանխիկ ձևով գնում և վաճառում է արտարժույթ, հետևաբար պահպանում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված բոլոր չորս նորմատիվները՝ «Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը», «Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը», «Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցության նվազագույն չափը /Ն1/», «Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը»: Հաշվետու եռամսյակի ընթացքում այդ նորմատիվների գծով խախտումներ չկան:

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի աշխատողների քանակը հաշվետու եռամսյակում՝ 22 անձ:

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի 2013թ-ի 1-ին եռամսյակի միջանկյալ հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը կարող եք գտնել Ընկերության վեբ.կայքում:

-  Գլխավոր տնօրեն
-  Հասցե
-  Հեռախոս
-  Ֆաքս
-  Էլ. փոստ
-  Վեբ. կայք

Արտաշես Տոնոյան
 0007, Երևան, Արշակունյաց 69
 (10) 44 56 64,
 (10) 44 56 64
 info@goodcredit.am
 http://www.goodcredit.am